

Թիւ 3487  
Փետրուար 7, 1962

Արժանաշնորհ  
Տ. Ներսէս ԲՏՆԿ. Բաբուրեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Գր. Լուս. Եկեղեցւոյ  
Շիգալօ.

Սիրելի Տէր Հայր,

Ձեր տարեկան տեղեկագրին մէջ ըսած էք թէ համայնքիդ Թեմական պատգամաւոր ընտրուած են՝ Յովհաննէս Թադոյեան, Տօքթ. Հրաչ Խթիկեան, Կարօ Ղազարեան եւ Մակար Նահապետեան:

Կ'ենթադրեմ թէ առաջին երկուքը բուն պատգամաւորներն են Ձեր համայնքին, իսկ վերջին երկուքը անոնց անձնափոխանորդները: Անշուշտ, եթէ Ձեր Ժուխի տրատու անդամներու ըլլար 401 հոգի, պիտի կրնայիք 4 պատգամաւոր տալ, բայց քանի որ Ձեր անդամներու թիւն է միայն 125 հոգի, այդ պարագային բուն պատգամաւորները պէտք է ըլլան Յովհաննէս Թադոյեան եւ Տօքթ. Հրաչ Խթիկեան:

Հաճեցէք այս պարագան հաստատել:

Առաջնորդ Սրբազան Հայրը երկու շաբաթուայ համար Մայամի այցելութեան երթալէ առաջ Թեւադրեց ինծի անձնապէս Ձեզի ըսել թէ Ձեր տեղեկագրին մէջ գաղութիդ հայութեան ընդհանուր թիւը մօտաւորապէս չէիք յիշած, իսկ համայնքիդ պատկանողներուն թիւը 125 հոգի գրած էիք, մինչդեռ Եկեղեցւոյդ ունեցած ընդհանուր հասցէներու թիւը տուած էիք 600 հոգի: Հաճեցէք այս պարագան եւս պարզել:

Թեւադրուած ենք նաեւ Ձեզմէ խնդրել որպէս զի Առաջնորդարան ղրկէք Ձեր Թեմական Պատգամաւորներու Ձեր եւ Միակն խորհուրդիդ ատենպպետի եւ ատենադպիրի կողմէ ստորագրուած վկայագիրերը, որպէս զի անոնց ընտրութիւնը հաստատուի եւ կարենան մասնակցիլ Մայիս 5-6ին գումարուելիք Թեմական Պատգամաւորական Ժողովին:

Մնամ խորին յարգանքօք

Սուրէն Մանուէլեան  
Դիւանապետ